11.qxd 31/05/2026 21:02 Page 1

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 29 մայիսի 2026թ. թիվ 11 (639)

ՀԱՎԵՐԺ ՓԱՌՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՐՏԱՍԱՆ ԲՈԼՈՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Ամեն տարվա Մայիսի 28-ին բովանդակ հայությունն անհուն երախտագիտությամբ գլուխ է խոնարհում բոլոր այն այրերի առաջ, ովքեր արյան ու մոխիրների միջից 1918 թվականին հրաշքով կարողացան դնել Հայաստանի Հանրապետության հիմքերը, որոնց վրա էլ վեր բարձրացան, ամրապնդվեցին ու զարգացան Հայաստանի Երկրորդու Երրորդ Հանրապետությունները:

Այո՛, Հայաստանի Հանրապետության առաջին ճարտարապետները չերկնչեցին ստեղծված ծայրահեղ բարդ իրավիճակում՝ կայացնելով պատմական վճիռը: Սարդարապատում, Բաշ-Ապարանում, Ղարաքիլիսայում, Սեւանի ավազանում, Հայաստանի այլ վայրերում մեր հողի ու արյան թշնամիների դեմ գոյամարտ տվող զինվորների ու սպաների կողքին համարժեք խիզախություն հանդես բերեցին նաեւ քաղաքական գործիչները՝ պատմական ակտով հավերժացնելով թե՛ Հայաստանի Հանրապետության ընթացքը, թե՛ իրենց անունները:

Հիմա հերթը մերն է՝ պաշտպանելու, ծաղկեցնելու, փայփայելու եւ զարգացնելու համայն աշխարհի հայության միակ ու անկրկնելի հայրենիքը՝ բոլորիս համար սրբազան համարվող Հայաստանի Հանրապետությունը:

«Գեղամա աշխարհ»

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման օրվա կապակցությամբ:

Մայիսի 28-ը մեր պետականության, ազգային արժանապատվության եւ միասնականության խորհրդանիշն է: Այս օրը մեզ հիշեցնում է խաղաղ, անվտանգ եւ ուժեղ պետություն կառուցելու մեր ընդհանուր պատասխանատվության մասին:

Այսօր մեր առաջնային նպատակներից է՝ ամրապնդել հաստատված խաղաղությունը, ապահովել երկրի անվտանգ զարգացումն ու կայուն ապագան: Այդ ճանապարհին Հայաստանի Հանրապետության բանակը շարունակում է կարեւոր դեր ունենալ՝ պաշտպանելով մեր պետության անվտանգությունն ու խաղաղ կյանքը:

Հանրապետության հրապարակում կայանալիք զորահանդեսը խորհրդանշում է մեր պետության կազմակերպվածությունը, կայունությունն ու խաղաղ ապագայի հանդեպ վստահությունը:

Թող այս օրը յուրաքանչյուրիս համար դառնա նոր հավատ ու պատասխանատվություն ներշնչող խորհրդանիշ՝ հանուն խաղաղ, անվտանգ եւ զարգացող Հայաստանի:

Խաղաղություն՝ մեր ժողովրդին, ուժ՝ մեր պետությանը:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՅԻՆ 4254 ԱՇԱԿԵՐՏ

Գեղարքունիքի մարզի 123 հանրակրթական հաստատություններում 2026 թվականի մայիսի 22-ին հնչեց Վերջին զանգը:

«Վերջին դաս» միջոցառումներն անցկացվեցին ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող 8 եւ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող 115 դպրոցներում:

2025-2026 ուսումնական տարվա ավարտին դպրոցներին հրաժեշտ են տալիս 4254 շրջանավարտ, որից 568-ը՝ ԿԳՄՍ նախարարության ենթակայության, 3686-ը՝ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող դպրոցներից:

Շրջանավարտներից 2591-ը ավարտում են 9-րդ դասարանը, 1663-ը՝ 12-րդ դասարանը: ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող դպրոցների 12-րդ դասարանին հրաժեշտ են տալիս 543 աշակերտ, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող միջնակարգ դպրոցների 12-րդ դասարաններին՝ 1120 աշակերտ:

«Վերջին դաս» միջոցառումներին մասնակցել են են Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, Մարտունու, Վարդենիսի, Գավառի, Սեւանի եւ Ճամբարակի համայնքապետարանների աշխատակիցներ, ծնողներ:

Հասարակական կարգը խստիվ հսկվել է ՀՀ ՆԳՆ պատկան մարմինների կողմից:

Հանրակրթական դպրոցների շրջանավարտներին շնորհավորական ուղերձ է հղել Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

«Սիրելի՛ շրջանավարտներ, հարգելի՛ ուսուցիչներ, ծնողներ եւ կրթության ոլորտի ներկայացուցիչներ, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ «Վերջին զանգի» կապակցությամբ:

Այս օրը յուրահատուկ սահմանագիծ է յուրաքանչյուր շրջանավարտի կյանքում՝ լի հուզմունքով, հիշողություններով, երազանքներով ու նոր սպասումներով: Դպրոցական տարիներն ավարտվում են, սակայն սկսվում է առավել պատասխանատու ու կարեւոր մի փուլ, որտեղ ձեր գիտելիքը, աշխատասիրությունն ու արժեհամակարգը դառնալու են ձեր գլխավոր ուղեցույցները:

Սիրելի՛ շրջանավարտներ, վստահ եմ՝ ձեզանից յուրաքանչյուրն իր ներդրումն է ունենալու մեր համայնքների, մեր պետության զարգացման ու հզորացման գործում: Մնացե՛ք համարձակ, նպատակասլաց եւ երբեք չկորցնեք հավատը ձեր ուժերի նկատմամբ:

Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում ուսուցիչներին՝ նվիրված աշխատանքի, համբերության եւ սերունդներ կրթելու պատասխանատու առաքելության համար: Շնորհակալություն նաեւ ծնողներին՝ մշտական աջակցության եւ հոգատարության համար:

Թող այս օրը դառնա նոր հաջողությունների, մեծ ձեռքբերումների եւ խաղաղ ու բարեկեցիկ ապագայի սկիզբ:

Բարի երթ ձեզ, սիրելի՛ շրջանավարտներ»,- ասված է Գեղարքունիքի մարզպետի շնորհավորական ուղերձում:

«Գեղամա աշխարհ»

ՆՈՐԱԲԱԿԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒ ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Նորաբակ սահմանամերձ գյուղը բնակեցված է եղել անհիշելի ժամանակներից: Այդ մասին են վկայում 2011-2013 թվականներին ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի կողմից այստեղ իրականացված հնագիտական պեղումները Գերմանիայի Հալեի ու Թյուբինգենի համալսարանների հետ համագործակցությամբ: Գիտական արշավախմբի ղեկավար, հնագետ, պատմական գիտությունների դոկտոր Արսեն Բոբոխյանի վկայությամբ՝ Պեղումներ են իրականացվել Նորաբակ գյուղին կից գտնվող ամրոց-բնակավայրի «Նորաբակ 1» հնավայրում: Բնակավայրը տեղակայված է Սոթքի ոսկու հանքեր տանող ճանապարհին: Պեղումների արդյունքում գտնված նյութերը պարզել են, որ հուշարձանի տարածքը բնակացված է եղել դեռեւս վաղ բրոնզի դարաշրջանում (Ք.ա. 35-25 -րդ դարերում, իսկ պաշտպանական համակարգը գործել է վաղ եւ միջին երկաթի դարաշրջանում (Ք.ա. 12-7-րդ դարերում):

Պատմական այլ աղյուրները տեղեկացնում են, որ Նորաբակը Քրիստոսից առաջ յոթերորդ դարից ընդգրկված է եղել Մեծ Հայքի թագավորության մեջ, Սյունյաց նահանգի Սոդաց գավառի կազմում: 13-րդ դարից տարածքն անցել է Դոփյան իշխանական տան տիրապետության ներքո: Հետո տարածքը մտել է Սեֆյան Իրանի, այնուհետ՝ Ռուսաստանի կազմում: 1918 թվականի մայիսից գտնվում է Հայաստանի Հանրապետության կազմում:

/շարունակությունը՝ էջ 3-ում/

11.qxd 31/05/2026 21:02 Page 2

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ 6 ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՄԱՅԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Դավիթ Անհաղթ, Ալաշկերտի, Մխիթար Հերացի, Հրաչյա Ներսիսյան, Նարեկացի եւ Չարենցի փողոցներում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ընթանում են ճանապարհների հիմնանորոգման եւ մայթերի կառուցման ու սալարկման աշխատանքները:

Մարտունի քաղաքի վերոնշյալ 6 փողոցների հիմնանորոգման ծրագրերի պայմանագրային արժեքը կազմում է 275 միլիոն 333 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Մարտունի քաղաքի Դավիթ Անհաղթ, Ալաշկերտի, Մխիթար Հերացի, Հրաչյա Ներսիսյան, Նարեկացի եւ Չարենցի փողոցների երթեւեկելի մասերի ասֆալտապատում՝ 2900 մետր ընդհանուր երկարությամբ եւ շուրջ 19 հազար քառակուսի մետր մակերեսով եւ ջրահեռացման եւ ոռոգման առուների տեղադրում:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի մարտ ամսից եւ կավարտվեն 2026 թվականի աշնանը:

Մարտունի քաղաքի Դավիթ Անհաղթ, Ալաշկերտի, Մխիթար Հերացի, Հրաչյա Ներսիսյան, Նարեկացի եւ Չարենցի փողոցների մայթերի կառուցման ու սալարկման ծրագրերի ընդհանուր պայմանագրային արժեքը կազմում է 263 միլիոն դրամ, որի 65 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 35 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է վերոնշյալ փողոցների մայթերի կառուցում ու սալարկում՝ շուրջ 5981 քառակուսի մետր մակերեսով:

Շինարարական աշխատանքների մեկնարկը Դավիթ Անհաղթ, Ալաշկերտ եւ Նարեկացի փողոցներում տրվել է 2025 թվականի սեպտեմբերից, Մխիթար Հերացի, Հրաչյա Ներսիսյան եւ Չարենցի փողոցներում՝ 2026 թվականի մարտ ամսից: Մայթերի կառուցման ու սալարկման աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026 թվականի դեկտեմբերին:

Դավիթ Անհաղթ, Նարեկացի, Չարենցի փողոցներում 2026 թվականի մայիսի 25-ի դրությամբ շինարարական աշխատանքներն ավարտված են շուրջ 70, Հրաչյա Ներսիսյան փողոցում՝ շուրջ 30 տոկոսով: Մխիթար Հերացի եւ Ալաշկերտ փողոցներում աշխատանքների մեկնարկը նոր է տրվել:

Մարտունի քաղաքի 6 փողոցների ճանապարհների երթեւեկելի մասի հիմնանորոգման եւ մայթերի կառուցման ու սալարկման ծրագրի վրա ծախսվող ընդհանուր գումարը կկազմի 538 միլիոն 333 հազար դրամ:

Կենսական կարեւոր նշանակության այս ծրագրերի իրականացման արդյունքում Մարտունի քաղաքի Դավիթ Անհաղթ, Ալաշկերտի, Մխիթար Հերացի, Հրաչյա Ներսիսյան, Նարեկացի եւ Չարենցի փողոցների հազարավոր բնակիչներ պատմության մեջ առաջին անգամ ասֆալտապատ ճանապարհներից ու սալիկապ մայթերից օգտվելու հնարավորություն կունենան՝ հիմնովին ազատվելով տասնամյակներ ի վեր գոյություն ունեցող ճանապարհների անբարեկարգ ու անհրապույր վիճակի բեռից:

Խոսրով Խլղաթյան

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԳԱՆՁԱԿԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՓՈՂՈՑԸ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գանձակ գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սկսվել եւ ընթանում են Սայաթ-Նովա փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Գանձակի Սայաթ-Նովա փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 73 միլիոն 500 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Սայաթ-Նովա փողոցի հիմնանորոգում՝ 767 գծամետր երկարությամբ եւ 4219 քառակուսի մետր մակերեսով: Տեղադրվում են նաեւ ջրահեռացման առուներ՝ երկաթբետոնյա կիսախողովակներով:

2026 թվականի մայիսի 16-ի դրությամբ Սայաթ-Նովա փողոցում արդեն ավարտվել են հողային եւ ջրահեռացման առուների տեղադրման աշխատանքները, ճանապարհի երթեւեկելի մասը նախապատրաստվում է ասֆալտապատման:

Շինարարական աաշխատանքները կավարտվեն մայիսի վերջերին:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն:

Ալվարդ Մանուկյան

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԵՎ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Երեւանյան եւ Մյասնիկյան փողոցներում շարունակվում են հիմնանորոգման աշխատանքները, որոնց մեկնարկը տրվել էր նախորդ տարվա սեպտեմբերից, ՀՀ պետբյուջեից տրամադրված միջոցների հաշվին:

Մարտունու Երեւանյան եւ Մյասնիկյան փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 677 միլիոն 777 հազար դրամ:

Ծրագրով նախատեսված է Մարտունի քաղաքի Երեւանյան եւ Մյասնիկյան փողոցների փողոցների առանձին հատվածների հիմնանորոգում՝ 1,7 կիլոմետր երկարությամբ, ջրահեռացման ներքին եւ արտաքին ցանցերի կառուցում, մայթերի սալիկապատում, մուտքերի եւ իջատեղերի ասֆալտապատում, գծանշում եւ կահավորում: Տեղադրվող երկշերտ ասֆալտբետոնե ծածկը կկազմի 18 հազար 500 քմ մակերեսով: 4400 քմ ասֆալբետոնե շերտ էլ տեղադրվում է մուտքերում եւ իջատեղերում:

Մյասնիկյան փողոցում հիմնանորոգման աշխատանքները իրականացվում են կինոթատրոնի շենքից մինչեւ երաժշտական դպրոցի խաչմերուկ ընկած հատվածում, Երեւանյան փողոցում՝ ոստիկանության շենքից մինչ Ախթամարի արձանի խաչմերուկ ընկած հատվածում:

2026 թվականի մայիսի 16-ի դրությամբ շինարարական աշխատանքներն իրականացվել են շուրջ 60 տոկոսով: Երեւանյան փողոցում ասֆալտապատման աշխատանքները ավարտված են, իսկ Մյասնիկյան փողոցում դրանք կսկսվեն առաջիկա օրերի ընթացքում: Ճանապարհաշինությանը զուգահեռ կառուցվում են հարմարավետ մայթեր եւ առանձնացվում են կանաչապատման հատուկ գոտիներ: Հիմնանորոգման աշխատանքների շրջանակում՝ Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոցի այն հատվածներում, որտեղ արդեն պատրաստ են կանաչ գոտիների տարածքները՝ տնկվել են 2-3 մետր բարձրություն ունեցող «Տուա» տեսակի դեկորատիվ ծառեր: Ընտրված ծառատեսակները համապատասխանում են քաղաքային միջավայրի չափանիշներին՝ չփակելով տեսադաշտը եւ ապահովելով քաղաքի գեղեցիկ ու խնամված տեսքը:

Մարտունու Մյասնիկյան եւ Երեւանյան փողոցների հիմնանորոգման, կանաչապատման ու ծառապատման աշխատանքները կավարտվեն առաջիկա ամիսների ընթացքում:

«Գեղամա աշխարհ»

ՃԱՄԲԱՐԱԿՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԽՈՇՈՐ ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի բնակավայրերում արտաքին լուսավորության ցանցի կառուցման խոշոր ծրագիր է իրականացվում՝ ընդգրկելով Ճամբարակ քաղաքը, Վահան եւ Թթուջուր բնակավայրերը, ինչպես նաեւ Հ-30 հանրապետական նշանակության ավտոճանապարհի հատվածներ:

Ինչպես տեղեկացրին Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմից, Ճամբարակի արտաքին լուսավորության ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 182 միլիոն դրամ, որի 70 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 30 տոկոսը՝ Ճամբարակի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է արտաքին լուսավորության ցանցի կառուցում Ճամբարակ քաղաքի կենտրոնական փողոցում, Վերին Ճամբարակ թաղամասում, Վահան ու Թթուջուր գյուղերում, ինչպես նաեւ՝ Հ-30 հանրապետական նշանակության ավտոճանապարհի որոշակի հատվածներում, 11 հազար 780 գծամետր երկարությամբ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի նոյեմբերից եւ 2026 թվականի մայիսի 18-ի դրությամբ իրականացվել շուրջ 70 տոկոսով:

Աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026 թվականի ընթացքում:

Վերջերս Ճամբարակի արտաքին լուսավորության ցանցի կառուցման շինհրապարակ է այցելել ու աշխատանքները դիտարկել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ Է 8773 ՀԵԿՏԱՐ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ

Գեղարքունիքի մարզի համայնքների տնտեսություններում արդեն կատարվել է 8773 հեկտար գարնանացան:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից, 2026 թվականի մայիսի 15-ի դրությամբ Գեղարքունիքի մարզի տնտեսություններում ցանվել է 5803 հեկտար գարնանացան գարի, 2121 հեկտար կարտոֆիլ, 319,5 հեկտար գարնանացան ցորեն, 259 հեկտար բազմամյա կերային մշակաբույսեր, 192 հեկտար վարսակ, 37 հեկտար այլ հացահատիկ, 20 հեկտար ոլոռ, 16 հեկտար տեխնիկական մշակաբույսեր, 5 հեկտար ոսպ:

Նախորդ աշնանը Գեղարքունիքի մարզում կատարվել է 14 հազար 770,5 հեկտար աշնանացան, որից 14 հազար 651,6 հեկտարը կազմում են աշնանացան ցորենի, 1 հեկտարը՝ աշնանացան գարու եւ 117,9 հեկտարը՝ սխտորի ցանքերը:

Գարնանացանի ընթացքը որոշակիորեն ձգձգվել է գարնանային ամիսների անբարենպաստ եղանակների պատճառով: Մարզի տնտեսություններում գարնանացանի աշխատանքները կշարունակվեն մայիսի երրորդ տասնօրյակի եւ հունիս ամսի առաջին կեսի ընթացքում:

11.qxd 31/05/2026 21:02 Page 3

ՆՈՐԱԲԱԿԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒ ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐԺԵՔՆԵՐԸ



/սկիզբը՝ էջ 1-ում/

Այս գյուղը գտնվում է Արցախ տանող ճանապարհներից մեկի հանգույցում, ուստի եւ շատ հաճախ է ենթարկվել նվաճողների ասպատակություններին, դարձել ռազմական բախումների վայր: Ու դժվար չէ պատկերացնել, թե ինչ սարսափներ ու կորուստներ է կրել հայ բնակչությունը այդ արշավանքների արդյունքում: Այս գյուղը նաեւ հսկող դիրք ունի իրենից դեպի հյուսիս տարածվող Մասրիկի լայնածավալ հարթավայրի վրա:

Նորաբակում վերջերս գետնատարած վիճակից բարձրացված ու կանգնեցված խաչքարի արձանագրությունը հավաստում է, որ այստեղ հայ բնակչությունն ապրել է մինչեւ 17-րդ դարի վերջերը, գուցե նաեւ 18-րդ դարի սկիզբը, որից հետո արդեն գյուղը վերաբնակեցվել է մահմեդական ցեղերով: Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցն իր «Տեղագիր Գեղարքունի Օովազարդ գավառի» կոթողային ու հանրագիտարանային աշխատության մեջ այս գյուղի անունը նշում է Ղարաղոյին տարբերակով, որպես արդեն

թուրքաբնակ, «Որո վերեւի բլրակի վերա կան գերեզմաններ եւ խաչքարեր, որոց միույն վերա արեւելյան երեսից գրված էր. «Շնորհիվն Աստուծո ես տեր Մովսես բեկ եւ աղա գյուղիս միաբան կանգնեցի սուրբ խաչս բարեխոս Տեր Սահակին, հորն յուրո Միր Հավրային, թոռն Իսրայելին, հիշեցեք ի Քրիստոս»: Սույն խաչքարի արեւմտյան երեսին գրված է. «Սուրբ խաչս բարեխոս Սահակ կազմողին, թվին ՌԵԽԷ/ 1698/

Տապանաքարերի միույն վերա գրված է. «Այս է հանգիստ Խուդանի որդի պարոն Իվանին, թվ. ՌԵԻԷ/1678/»:

Եկեղեցվո միայն մի որմն եւ երկու սյունքն երեւին»,-վկայում է Մեսրոպ Սմբատյանցը:

Հարկ է նշել, որ Մեսրոպ Սմբատյանցն այս վայրեր այցելել է 1863 թվականին, երբ դեռ կանգուն են մնացել գերեզմանատանը մոտ գտնվող եկեղեցու մի պատն ու սյունը: Իսկ ահա հետագա ժամանակներում այլալեզու ու այլադավան ցեղերը վերացրել են թե՛ Իվանի տապանաքարն ու բազմաթիվ այլ Խաչքար-տապանաքարեր, թե՛ եկեղեցու պատն ու սյունը:

Գյուղի անունը եւ խաչքարի արձանագրությունը նույնությամբ հիշատակում է ականավոր մյուս հնագետը՝ Երվանդ Լալայանը, ով 1910-ական թվականներին այս տարածքի բնակավայրեր է այցելել՝ պատմագիտական ուսումնասիրություններ կատարելու նպատակով:

Նորաբակի անունը Մեծ Ղարաղոյունլի տարբերակով նշում է նաեւ անվանի հայագետ, վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը՝ իր «Հայ միջնադարյան ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ» աշխատություններից մեկում անդրադառնալով Օհանէս կազմողի գործունեությանը: «Այս վարպետի շինած միակ հայտնի խաչքարը գտնվում է Բասարգեչարի շրջանի Մեծ Ղարաղոյինլի գյուղում: Այն կանգնած է գյուղամիջի բլրի գագաթին, որտեղ հնում եղել է գերեզմանատուն: Խաչքարն իր դարաշրջանի լավագույն նմուշներից է, գեղեցիկ քանդակներով զարդարված է ոչ միայն արեւմտյան, այլ նաեւ արեւելյան երեսը, որի կենտրոնում պատկերված է մեծ խաչ, իսկ շուրջն ընդարձակ արձանագրություն է փորագրված: Խաչքարը կանգնեցրել են իրենց հոր՝ Տեր Սահակի եւ մոր հիշատակին նրանց չորս զավակները, 1698 թվականին: Այս խաչքարի արձանագրություններն առաջին անգամ հրատարակել է Սմբատյանցը, խիստ աղճատված ձեւով, ուր եւ Օհանէսի փոխարեն կազմող է դարձել խաչքարի տերը՝ Սահակը: Այս նույն աղճատումներով այն մտել է նաեւ Երվանդ Լալայանի աշխատության մեջ»,- գրում է Բարխուդարյանը:

Ապա նա հստակ ուղղություն է մտցնում արձանագրության տեքստում, որն ասում է. «Շնորհիվն Աստուծոյ ես Թամրազս, Տեր Մովսես, Ալայպէկս, Ղարագուզս միապան կանկնեցինք խաչս բարեխոս Տեր Սահակին՝ հօրս մերո եւ մար մեր Հմահին, թոռ Նիւրայելին. յիշեցեք ի Քրիստոս»:

Իսկ այս խաչքարի ճակատային մասի ամենավերին քիվում ուռուցիկ ու ընդգծված տառերով գրված է. «Սուրբ Խաչս բարեխոս Տեր Սահակին. Օհանէս կազմող»:

Այս խաչքարը շատ չարչրկված, բայց հայտնության նման պատմություն ունի, քանի որ երկար ժամանակ գտնվել է գետնատարած ու հողածածկ վիճակում, անգամ այն ժամանակ, երբ հրաշքով վերահայացած Նորաբակում հաստատվել են Ադրբեջանից 1988 թվականին բռնի տեղահանված հայ ընտանիքները:

Նրա հետքերով տողերիս հեղինակին տարավ պատմաբան, խաչքարարվեստի ուսումնասիրության մեջ խորացած Սեւակ Արեւշատյանը:

Այս խաչքարը գտնվում է Նորաբակ մտնող գլխավոր ճանապարհի մուտքից դեպի արեւմուտք, մի քանի տասնյակ մետր հեռվում գտնվող բլրի վրա:

Մինչ խաչքարին հասնելը Սեւակ Արեւշատյանի ուշադրությունը գրավեց քարե անշաղախ ցանկապատի մեջ դրված թամբած ձիու քարե քանդակը: Նրանից քիչ հեռվում էլ , ճահճոտ տարածքում, հոսող առվի մեջ, նկատեցինք պատկերազարդ տապանաքար, որը, հավանաբար, այստեղ հայտնվել է այլադավանների կողմից տարածքը քանդելու, տակնուվրա անելու ու այլ նպատակներով օգտագործելու արդյունքում:

Պարզապես ցնցող տպավորություն թողեց Օհանէսի կերտած խաչքարը: Խաչքարի ճակատային մասում , երկու փոքր խաչերի արանքում Հիսուսի պատկերն է: Դրանցից ցած մեծ խաչի պատկերն է, որի ձախակողմյան հատվածում արդեն Մարիամ Աստվածածինն է՝ Մանուկ Հիսուսին գրկած: Ամենաներքեւում մարդկային երեք պատկերներ են, որոնք հավանաբար այդ ընտանիքի անդամներն են: Խաչքար արեւելյան կողմում, թիկունքային մասում արդեն մի խաչ է քանդակված, որի շուրջ էլ տարածվում է վերը հիշատակված արձանագրությունը:

-Այս խաչքարը հողի երեսից բարձրացվել ու կանգնեցվել է միայն 2020 թվականին: Պատահաբար է հողի շերտի տակ նկատվել քարի վրայի խաչն ու գիրը: Մի քանի տարի առաջ, դարձյալ պատահական դիպվածով, այս տարածքում հողի տակից դուրս են բերվել մի քանի հիասքանչ խաչքարեր, իսկ մի խաչքար էլ ի հայտ եկավ դպրոցի շենքի դիմաց, ճանապարհի եզրին, որն այժմ էլի կանգնեցված վիճակում է: Ես կարծում եմ, որ գյուղի մեջ ու նրա վարչական տարածքում դեռ շատ ավելի խաչքարեր ու տապանաքարեր կգտնվեն, որոնք երկար տարիների ընթաքում ավերել կամ թաղել ու թաքցրել են մեր ժողովրդին ու նրա պատմամշակութային արժեքներին թշնամացած ցեղերը,-նշեց Նորաբակի վարչական ղեկավար Վազգեն Ասատուրյանը:

Հնավայրի տարածքում տեսանք ցանկապատ ծառայող մի տապանաքար, որի լուսանկարն ուսումնասիրելու ժամանակ նկատեցինք վիմագիր արձանագրություն, որի վերծանման համար հարկ կլինի վիմագրագետների օգնությունը:

Վազգեն Ասատուրյանը մեզ ուղեկցում է դեպի շրջակայքի ավերակներ՝ ցույց տալով մի քանի հրաշաքանդակ խաչքարեր, որոնք հողի տակից դուրս են բերվել ու ուղղակիորեն հենվել ավերակված պատերին: Խաչքարերից մեկի բարձրությունը կազմում է շուրջ 3,5 մետր:

Խաչքարերից մեկի կողքին ընկած է քարե սյան խարիսխ, որը միանգամայն հուշում է մոտակայքում մի հոգեւոր ճարտարապետական կառույցի գոյության մասին:

-Դպրոցի շենքի դիմաց, գյուղ մտնող մուտքի մոտ ի հայտ եկած խաչքարը պատրաստվել է 9-րդ դարում: Մեր տեսած երկու խաչքարերը կերտվել են 13-րդ դարում, իսկ մյուս խաչքարը՝ 11-12-րդ դարերում: Արձանագիր խաչքարն էլ կերտվել է 1698 թվականին: Այս ամենը փաստում են, որ 9-17-րդ դարերում այս հողի վրա ապրել ու արարել է բացառապես հայ ժողովուրդը,-հավաստեց Սեւակ Արեւշատյանը:

Ապա Վազգեն Ասատուրյանը մեզ ուղեկցեց բլրի հյուսիսային կողմ՝ ցույց տալով մի այլ զարմանահրաշ քանդակ: Այն մարդկային դեմք ու գլուխ է ընդամենը, որը հիշեցնում է կռքի արձան ու հեթանոսական մշակույթի տարր: Կարծում եմ, որ այստեղ իրենց հեղինակավոր խոսքը կարող են ասել մասնագետները:

-Այս քանդակն էլ եղել է շուռ տված վիճակում, այնպես, որ երեւացող կողմից սովորական քարի տպավորություն թողնի: Մի պատահական դիպվածով էլ այդ քարն են շուռ տվել ու տեսել, որ այն գրավիչ քանդակ է: Այս ողջ տարածքում, կարծում եմ, դեռ շատ խորհրդավոր արժեքներ կան հողին տակ թաղված, որոնք կարող են ի հայտ գալ հնագիտական լուրջ ուսումնասիրությունների ու պեղումների արդյունում,-հավաստեց Նորաբակի վարչական ղեկավարը:

Մեսրոպ Սմբատյանցի նկարագրած գերեզմանոցից ժամանակի ընթացքում այստեղ հաստատված մահմեդական բնակիչները գրեթե հետք չեն թողել՝

ամբողջ բլուրն ու շրջակայքը վերածելով բնակելի տարածքների՝ տների ու տնամերձ հողամասերի: Մի տան կիսաքանդ պատի ստորին հատվածում նկատվեց բոլորովին այլ ոճի պատաշար՝ արդեն սրբատաշ քարերով, որը սովորական աչքով էլ տարբերվում էր նոր ժամանակների շարվածքից: Դա էլ գուցե կարող է լինել հայկական եկեղեցու հետքի վկայությունը, ինչպես որ քիչ հեռվում ընկած քարե սյան խարիսխն էր:

Ժամանակավորապես ավարառու ազգերից գերված, վնասված կամ թաղված հայկական պատմամշակութային արժեքները ոչ միայն պետք է խնամվեն ու պահպանվեն աչքի լույսի պես, այլ նաեւ պետք է ստանան պետական գրանցում, հանրահռչակվեն ու ավելացնեն համայն հայության հոգեւոր գանձերի ու մասունքների անհաշվելի կշիռները:

Խոսրով Խլղաթյան

11.qxd 31/05/2026 21:03 Page 4

ՍՈԹՔՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 12 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Սոթք գյուղում սուբվենցիոն եւ պետական ծրագրերի շրջանակներում 2018-2025 թվականների ընթացքում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 12 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 1 միլիարդ 834 միլիոն 530 հազար դրամ:

Իրականացված ծրագրերից 8-ը սուբվենցիոն են՝ 492 միլիոն 484 հազար դրամ ընդհանուր արժեքով, եւ 4-ը՝ պետական՝ 1 միլիարդ 418 միլիոն 482 հազար դրամ ընդհանուր արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականներին Սոթքում կառուցվել է 11121 մետր խմելու, 4088 մետր ոռոգման ներքին ու արտաքին ջրատար ցանցեր, 6070 մետր արտաքին լուսավորության ցանց, 10000 գծամետր գազատար ցանց, 4 առանձնատուն, վերանորոգվել ադրբեջանական ագրեսիայի հետեւանքով վնասված 110 բնակարան, հիմնանորոգվել 400 գծամետր ներհամայնքային

նշանակության ճանապարհ:

«Հայաստանի Հանրապետության բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական ծրագրի շրջանակներում 2024 թվականից սկսվել եւ ընթացքի մեջ են գտնվում 72 նորակառույց բնակարանների շինարարական աշխատանքները, 1 միլիարդ 152 միլիոն դրամի ներդրմամբ: Նորակառույց բնակարանների 80 տոկոսն արդեն պատրաստ է շահագործման:

Ադրբեջանի զինուժի ձեռնարկած ագրեսիայի հետեւանքով հիմնովին քանդված 4 բնակարանները հիմքից կառուցվել ու շահագործվել են 2024 թվականի դեկտեմբերից, պետբյուջեի միջոցների հաշվին: Այդ բնակարանների կառուցման ու հրետակոծության հետեւանքով վնասված 110 բնակարանների վերանորոգման համար պետբյուջեից հատկացվել է 190 միլիոն դրամ:

«Գեղամա աշխարհ»

ԼԻՃՔՈՒՄ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԵՐԵՔ ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտական փուլում են գտնվում Ա-2 թաղամասի 9-րդ փողոցի եւ Ա-5 թաղամասի 4-րդ փողոցի ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցման աշխատանքները:

Լիճքի երկու թաղամասերի ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 37 միլիոն 809 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է ոռոգման ներքին ցանցի կառուցում երկաթբետոնյա կիսախողովակներով, 1020 մետր ընդհանուր երկարությամբ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հուլիսից եւ 2026 թվականի մայիսի 18-ի դրությամբ արդեն մոտենում են ավարտին:

Ծրագրի իրականացման արդյունքում 2026 թվականի ոռոգման շրջանի մեկնարկից արդեն շուրջ 350 տնտեսություն կապահովվի անկորուստ ու անխափան ջրամատակարարմամբ:

Սուբվենցիոն մեկ այլ ծրագրով մեկնարկել եւ ընթանում են Ա-5 թաղամասի 6-րդ փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Լիճքի Ա-5 թաղամասի 6-րդ փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 36 միլիոն 666 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Լիճքի Ա-5 թաղամասի 6-րդ փողոցի ասֆալտապատում՝ 532 մետր երկարությամբ եւ 2550 քառակուսի մետր մակերեսով:

Շինարարական աշխատանքների մեկնարկը տրվել է 2026 թվականի մայիսի 11-ից: Աշխատանքները կավարտվեն առաջիկա 1 ամսվա ընթացքում:

Ծրագրի իրականացման արդյունքում Լիճքի Ա-5 թաղամասի 6-րդ փողոցի բնակիչներն առաջին անգամ ասֆալտապատ ու բարեկարգ ճանապարհից օգտվելու հնարավորություն կունենան:

Լիճքում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտվել են մշակույթի տան վերանորոգման աշխատանքները:

Լիճքի մշակույթի տան վերանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 12 միլիոն 138 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է մշակույթի տան ներքին հարդարում, սանհանգույցների կառուցում, այլ աշխատանքներ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի փետրվարի եւ ավարտվել նույն թվականի մայիսի սկզբին:

«Գեղամա աշխարհ»

ԾՈՎԻՆԱՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՏԱՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄՈՏԵՆՈՒՄ ԵՆ ԱՎԱՐՏԻՆ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտին են մոտենում ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցման աշխատանքները:

Ծովինարի ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 42 միլիոն 460 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցում Ծովինարի 5 տարբեր թաղամասերում, երկաթբետոնյա կիսախողովակներով, 1370 մետր երկարությամբ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի սեպտեմբերից, վերսկսվել 2026 թվականի մարտից, իսկ մայիսի 15-ի դրությամբ արդեն գտնվում են ավարտական փուլում:

Ծրագրի իրականացման արդյունքում 2026 թվականի ոռոգման շրջանի մեկնարկից արդեն շուրջ 120 տնտեսությունների ոռոգման ջուրը կմատակարարվի անկորուստ ու ժամանակին:

«Գեղամա աշխարհ»

ԱՍՏՂԱԶՈՐԻ 10 ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձոր գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ընթանում են արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքները:

Աստղաձորի 10 փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 21 միլիոն դրամ, որի 60 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 40 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է արտաքին լուսավորության ցանցի կառուցում Աստղաձորի 2, 6, 21, 33, 36, 43, 46, 47, 48 եւ 70-րդ փողոցներում, 4400 գծամետր երկարությամբ, ԼԵԴ համակարգով աշխատող շուրջ 150 լուսատուների տեղադրմամբ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի ապրիլից եւ մայիսի 15-ի դրությամբ իրականացվել շուրջ 60 տոկոսով: Ծրագիրը

նախատեսված է ավարտել առաջիկա երկու ամիսների ընթացքում:

Ծրագրի իրականացման արդյունքում վերոնշյալ փողոցների բնակիչներն առաջին անգամ արտաքին լուսավորության ցանցից օգտվելու հնարավորություն կունենան:

«Գեղամա աշխարհ»

ՍԵՎԱՆՅԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՐՆԵՐԸ ՅՈՒՅԱԴՐՎԵԼ ԵՆ ՄՈԼԴՈՎԱՅՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի պատանի նկարիչների աշխատանքները վերջերս ցուցադրվել եւ ուշադրության են արժանացել Մոլդովայի Հանրապետությունում:

Մոլդովայի մայրաքաղաք Քիշնեւում մայիսի 20-21-ին անցկացվող «Քաղաքապետերի դաշնագիր՝ Արեւելք» ծրագրի 15-ամյակին նվիրված երկօրյա բարձր մակարդակի համաժողովի ընթացքում Մոլդովայի հայտնի գինեգործարան եւ մշակութային համալիր «Castel Mimi»-ում կազմակերպված ճանաչողական այցի ընթացքում գինեգործարանի տարածքում կազմակերպված ցուցահանդեսին ներկայացվել էին ԵՄ կայուն էներգիայի շաբաթների ընթացքում վերջին տարիներին կազմակերպված նկարչական մրցույթների արդյունքում լավագույնը ճանաչված նկարչական աշխատանքներ:

Դրանց ցուցադրման շարքում, ի թիվս Հայաստանի մի շարք համայնքների, ցուցադրվել էին նաեւ սեւանցի պատանի նկարիչների՝ Մարի Գալեյանի (2022թվական), Սյուզի Մանուկյանի (2024թվական), Միշել Գրիգորյանի (2025 թվական) աշխատանքները, որոնք ԵՄ Կայուն էներգիա շաբաթների անցկացման արդյունքում ազգային մրցանակաբաշխության ժամանակ ճանաչվել էին հաղթող:

Սեւան համայնքում այս օրերին ընթանում է «ԵՄ կայուն էներգիայի շաբաթ» միջոցառումների ծրագիրը, որում ընդգրկված են համայնքի նախակրթական ու կրթական հաստատությունները:

Արմինե Ղուկասյան

11.qxd 31/05/2026 21:03 Page 5

30 ՆՈՐ ԿԱՄԱՎՈՐ ՄԻԱՅԱՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՐՊՈՒՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ

2026 թվականի մայիսի 26-ին ՀՀ-ում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար Դեյվիդ Ալենը մասնակցեց Խաղաղության կորպուսի 31-րդ կամավորների խմբի երդման արարողությանը եւ վարեց նրանց երդման կարգը: Կամավորների նոր խումբը բաղկացած է 30 ամերիկացիներից, որոնք գալիս են Ամերիկայի Միացյալ Նահանգների բոլոր ծայրերից՝ արտացոլելով ամերիկյան ժողովրդի ողջ բազմազանությունը:

Հայերեն լեզվի, մշակույթի եւ մասնագիտական հմտությունների 11-շաբաթյա ինտենսիվ վերապատրաստումն ավարտելուց հետո կամավորներն այժմ պատրաստ են միանալու իրենց հյուրընկալ համայնքներին: Առաջիկա երկու տարիների ընթացքում նրանք կապրեն հայկական հյուրընկալ ընտանիքներում եւ կաշխատեն անգլերենի ուսուցիչների եւ երիտասարդության զարգացման ոլորտի մասնագետների հետ: Դասարանային աջակցության, համայնքային ծրագրերի եւ երիտասարդների ներգրավման գործունեության միջոցով կամավորները կնպաստեն անգլերեն լեզվի ուսուցման զարգացմանը եւ կաջակցեն երիտասարդներին՝ ձեւավորելու այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են իրենց համայնքներում վստահ եւ ակտիվ անդամներ դառնալու համար:

-Այս տարին առանձնահատուկ է Միացյալ Նահանգների եւ Հայաստանում ԱՄՆ դեսպանության համար, քանզի տարին հոբելյանական է, եւ մենք տոնում ենք ԱՄՆ անկախության 250-ամյակը: Այս տարի նաեւ լրանում է նախագահ Քեննեդու հիմնած «Խաղաղության կորպուսի» գործունեության 65 տարին: «Խաղաղության կորպուսը» շարունակում է մնալ ամերիկյան լավագույն ավանդույթները ներկայացնող մի կառույց, որն իրական կապեր ու հարաբերություններ է ձեւավորում Միացյալ Նահանգների ու այն երկրների միջեւ, որտեղ ծառայում են կամավորները: Այս տարիների ընթացքում աշխարհի գրեթե 150 երկրներում աշխատել են «Խաղաղության կորպուսի» շուրջ 240000 կամավորներ՝ օգնելով տեղի երիտասարդներին ձեռք բերել առաջնորդության ու կենսական այլ հմտություններ, նպաստելով համայնքային նախաձեռնությունների իրագործմանը եւ ընձեռելով շրջադարձային նշանակության միջմշակութային փորձառության ձեռք բերման հնարավորություններ,-նշեց ՀՀ-ում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար Դեյվիդ Ալենը:

-Այսօր Խաղաղության կորպուսի հայաստանյան գրասենյակի եւ մեր բոլոր գործընկերների համար հիշարժան օր է,- ասաց Խաղաղության կորպուսի Հայաստանյան գրասենյակի տնօրեն Ուիլիամ Օ'Դոնարքը,-մենք հպարտ ենք ողջունել Հայաստանում 30 նոր ամերիկացի կամավորների: Կամավորները կաշխատեն Հայաստանի տարբեր համայնքներում տեղի իրենց գործընկերների հետ՝ ոգեշնչելու աշակերտներին, աջակցելու ուսուցիչներին եւ նպաստելու հայ երիտասարդների հզորացմանը:

Միջոցառման ներկաների թվում էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, ՀՀ կառավարության ներկայացուցիչներ, ԱՄՆ դեսպանատան աշխատակիցներ, Խաղաղության կորպուսի նախկին եւ ներկա կամավորներ, կամավորներին հյուրընկալող հայ ընտանիքներ, ինչպես նաեւ ծրագրերի միջազգային եւ տեղական գործընկերներ:

Նոր խմբի կամավորների համալրմամբ՝ Հայաստանի տարբեր գյուղական վայրերում եւ քաղաքներում այժմ ծառայում է Խաղաղության կորպուսի մոտ 70 կամավոր:

Խաղաղության կորպուսի հայաստանյան գրասենյակի մասին

1992 թվականին ՀՀ կառավարության հրավերով Հայաստանում մեկնարկեց Խաղաղության կորպուսի ծրագիրը: 1992-ից ի վեր Խաղաղության կորպուսը նպաստել է Հայաստանում խաղաղության եւ բարեկամության հաստատմանը՝ միաժամանակ աջակցելով կրթության եւ երիտասարդության ոլորտների զարգացմանը: ԽԿ կամավորները նաեւ սովորեցրել են հայերին ամերիկյան մշակույթի մասին, իսկ ԱՄՆ վերադառնալով՝ իրենց հայրենակիցներին իրազեկել են հայ մշակույթի մասին:

1992 թվականից ի վեր շուրջ 1200 ԽԿ կամավոր է ծառայել Հայաստանում:

Խաղաղության կորպուսը հիմնադրվել է 1961 թվականին նախագահ Ջոն Ֆ. Քեննեդու կողմից: Մինչ օրս ավելի քանի 240000 ամերիկացի կամավոր է ծառայել աշխարհի 142 երկրներում:

Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն

ՀԻՊՆՈՏԻԿ ԱՐՎԵՍՏԻ ՔՐՄԱՊԵՏԸ



«Մի քիչ սիրով նայեք նկարներին, եւ նրանք կխոսեն ձեզ հետ» :

Հրանտ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ՀՀ ժողովրդական նկարիչ

Թաթոսը ժողովրդի նկարիչն է: Նա ամուր է կառչած հայոց սրբազան հողին ու իր կախարդական վրձնով կերտում է ազգային ու համամարդկային արժեքներ:

Արվեստագետն իր գույներով՝ սիրո մեծ մոլորակ է, որտեղ թեւածում է արեգակնային լույսն ու ջերմությունը: Եվ իր արարած կտավներից մարդկությունը սնուցվում է արվեստի կենսատու էներգիայով:

1938 թվականի ապրիլի 20-ին Շիրակ աշխարհում տիեզերական գույների հողմապտույտ էր: Այդ օրն է ծնվել Հրանտ Հովհաննեսի Թադեւոսյանը: Այսօր մեծն Վարպետը 88 տարեկան է: Ճաշակելով կյանքի դառն ու դաժան ճշմարտությունները, նա, սակայն, երբեք չի չարացել: Սրտում անսահման սերն է, հոգում՝ բոցավառվող լույսը ի կյանք: Այս ամենը երեւակված է նկարչի վրձնից ծնված անզուգական կտավներում: Ամեն մի կտավ յուրահատուկ էներգիա ունի, շունչ ու սրտի թրթիռ ունի, կյանք ու իմաստ ունի: Սիրո, լույսի ու բարության առաքյալն է Վարպետն իր արվեստով: Հրանտ Թաթոս արվեստագետի կյանքի ուղին հեշտ չի եղել: Իր աշխատասիրության ու բարձրյալի կողմից տրված տաղանդի շնորհիվ նա տարիների բովում թրծվել ու կայացել է որպես հայ գեղարվեստի քրմապետ: Անվանի գեղանկարիչը ստեղծագործում է բազմաժանր: Նրա վրձինը կերտել ու կերտում է նատյուրմորտներ, դիմանկարներ, վերացական հորինվածքներ, բնապատկերներ:

Երեւելի արվեստագետը շրջանավարտն է Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ գեղագիտության ֆակուլտետի: Նա երկար տարիներ մանկավարժական անխոնջ գործունեություն է ծավալում՝ դասավանդելով ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանում: Պրոֆեսորը, կրթելով սերունդներ, իր փորձն ու գիտելիքներն անվերապահորեն ու անմնացորդ փոխանցում է ուսանողներին:

Երփնանկարչի ոճն ու ձեռագիրն աննման է, տարբերվող ու շեշտող: Նա ունի գույնի եւ պատկերի նրբաճաշակ, էսթետիկ ընկալում, մկրտված է բացառիկ լույսով: Վարպետին հատուկ է գեղարվեստափիլիսոփայական խորը, ինքնատիպ մտածողություն, գույների համահավաք, ներդաշնակ ամպլիտուդա : Հրանտ Թաթոսին տրված է մարդկային շնորհներից ազնվագույնը՝ ստեղծագործելու, արարելու շնորհը: Նա իր անսպառ էներգիայով այն հասցրել է կատարելության, խոնարհությամբ ծառայել ի նպաստ հայրենիքին ու իր ժողովրդին: Վերջին տասնամյակներում հայ մշակույթի երկնակամարում Հրանտ Թաթոսի անունը փայլատակում է վառ լույսով՝ ջերմացնելով հայրենակիցների ու արվեստի երկրպագուների սրտերը :

Գեղանկարչի անհատական ցուցահանդեսները փայլուն կերպով կայացել են՝ Հայաստանի, Արգենտինայի, Ֆրանսայի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Շվեյցարիայի մի շարք քաղաքներում: Աշխարհի տարբեր երկրների մասնավոր հավաքածուներում սփռված վարպետի կտավները պատմում են ու խորհրդանշում հային: Որտեղ կա գույների մաեստրոյի վրձնահարվածը, այնտեղ տիրում է գերբնական խաղաղություն, սեր, լույսով լցված ջերմ մթնոլորտ :

Վեց հազարից ավելի կտավների շարքում մի առանձնահատուկ նշանակություն ունեն հայկական ու համաշխարհային կոթողները, քրիստոնեական տաճարները, սրբավայրերը, միջնադարյան հոգեւոր-կրթական համալիրները, որոնք նա հավերժացրել է իր մոգական վրձնով: Սրանք պատմական Հայաստանի, հայ ազգի անդուլ հավատի, կրոնի խոսուն ու լուռ վկաներն են: Հատկանշական են Անիի սուրբ Աստվածածին կաթողիկե եկեղեցին, որը դասվում է հայ ու համաշխարհային ճարտարապետական նմուշի շարքին, Օձունի սուրբ Աստվածածին գմբեթավոր բազիլիկ եկեղեցին, որը վաղ միջնադարյան եզակի կառույցներից է՝ հավերժացած Վարպետի կտավներում: Նաեւ սուրբ Կարապետ վանական համալիրն իր զորությամբ: Մռավ սարի լանջին բազմած պատմական Արցախի Դադիվանք վանական համալիրը: Դրանք նա պատկերել է իր վրձնի գույներով, հատուկ վեհությամբ ու անսահման հավատով: Արագած լեռան լանջին՝ Ամբերդ ամրոցի տարածքում, թադեւոսյանական վառ գունապնակով արարվել է «Առավոտ լուսո» կտավը՝ վեհաշուք սուրբ Աստվածածինը: Անձեռակերտ կտավ է «Խոնարհված եկեղեցին»՝ արարված վարպետի հոգու ամենանուրբ գույներով, ճշմարիտ հավատքի նվիրական ծաղկունքով: Ծաղկած եկեղեցիների շարքը անվերջանալի է, քանզի վարպետն ստեղծագործում է ամեն օր, ամեն ժամ :

Հայրենի բնաշխարհն իր վրձնով հավերժացրած գեղանկարիչը հայ մշակույթի գանձարանը հարստացրել է արվեստի արժեքավոր գոհարներով: Վարպետի յուրաքանչյուր բնապատկերում Հայաստան աշխարհի արբեցնող բույրն է:

Վարպետի կախարդական վրձնահարվածից արթնացած խաչխաչները, հյուսելով քնքուշ մեղեդի, սփռում են գունեղ տեսիլքներ: Հիպնոտիկ ազդեցությամբ գերում ու բժշկում հոգիներ:

Հայ գեղանկարչության մեջ եզակի նմուշ կարող ենք համարել Հրանտ Թաթոսի սպիտակ ցուլը՝ «Դադար» : Գլխավոր մեղեդին կանգ առած ակնթարթն է: Երբ երաժշտությունը դադարել է, բայց օդում սավառնում են հնչյունները: Կտավում մենակատարը ճերմակ ցուլն է՝ հստակ, մաքուր, առինքնող: Սա երաժշտա-խոհափիլիսոփայական լեգենդար կտավ է, որտեղ խորհուրդը սպասողական լռությունն է: Արվեստագետի մտահորիզոնը հատելով ժամանակի սահմանը, փիլիսոփայորեն իմաստավորած ընտրել է իր հոգուն ներդաշնակ գունաֆոն: Ճերմակ ցուլն իր հետեւում թողնում է մութն ու խավարը՝ մուգ դարչնագույնից անցնելով կարմիրով, ուղենիշը՝ դեպի արեւի ոսկեդեղինը: Խորհրդավոր այս կենդանուց լույս է ցոլում: Պերճաշուք կեցվածքով ցուլը, հզոր, բայց հանգիստ, հատատուն ու անդրդվելի քայլ է անում դեպի նորի սկիզբ, դեպի հաղթանակ:

Հրանտ Թաթոսի «Վարագույրի հետեւում» կտավը գայթակղության բարձրակետ է: Ստեղծագործ մտավորականն արարել է շնչահեղձության հասնող զգացմունք: Հյութեղ կարմիրում կնոջ շքեղությունն ու առաքինությունն է՝ զուգորդված այնպիսի խոնարհ կերպարանքով, որ լցվում-լիանում ես այրող ու մաքուր բոցով: Վարագույրից այն կողմ պատկերված է կանացի ողջ հմայքը, գաղտնի, խորհրդավոր էությամբ: Սիրո, կրքի բոցավառվող կարմիրից, ակամայից Ավ. Իսահակյանի տողերն են գալիս. «Եկեք՝ ստեղծենք Ադամի համար մի քնքուշ ընկեր, որ մարդը միայնակ չվայելե դրախտի հրապույրները»:

... Եվ Աստված բռնեց դեպի վեր սուրացող կրակն ու նրա բեկբեկուն, ճախրուն բոցերից ստեղծեց անդրանիկ կնոջը՝ Լիլիթին:

Եվ նայելով իր ստեղծածին՝ հիացած ասաց.

«Բարի է, որովհետեւ գեղեցիկ է»:

Անվանի նկարչի հետ շփումը մեծագույն պատիվ է: Նա մարդկային բարձր արժանիքներով օժտված իմաստուն մտավորական է: Յուրաքանչյուր բառը, խոսքը, անգամ վարվելաձեւը մշակույթ է՝ բնորոշ ազնվագույն արվեստագետին: Նշանակալի է իր սիրելի ու գեղեցկուհի տիկնոջ դերը վարպետի կյանքում: Տիկին Սիլվան, հայ կնոջը հատուկ հեզությամբ, ջերմությամբ, հոգատարությամբ, մեծ սիրով ոգեշնչում է Հրանտ Թաթոս մեծությանը:

Գեղանկարչի աչքերին նայելով՝ սուզվում ես մինչեւ հոգու անհատակ խորքը, որտեղից բարություն ու ջերմություն է հորդում: Ծայրահեղ նրբանկատ ու վեհանձն է գույների մաեստրոն: Երջանկություն է լինել նրա ժամանակակիցը, բարեբախտություն՝ անձնապես ճանաչելը:

Մարիաննա Գեւորգյան

11.qxd 31/05/2026 21:03 Page 6

ԳՊՀ 29-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԵՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԶԵԿՈՒՅՑՈՒՄՆԵՐ

Գավառի պետական համալսարանի ամենամյա՝ 29-րդ միջազգային գիտաժողովի առաջին բաժանմունքում ներկայացվել են զեկուցումներ փիլիսոփայական, աստվածաբանական, պատմական, մշակութաբանական գիտությունների տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ:

Ինչպես տեղեկացրին Գավառի պետական համալսարանի արտաքին կապերի եւ լրատվության բաժնից, գիտական զեկուցումները նվիրված էին հայոց պատմության հիմնախնդիրներին՝ Հայաստանի առաջին հանրապետության մամուլին, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը, 1945 թ. Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրության հարցին, ինչպես նաեւ 1915-1920-ականների Նոր Բայազետի գավառում որբախնամ գործունեության կազմակերպման խնդիրներին:

Գիտաժողովին զեկուցումներով հանդես են եկել Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Համլետ Ղաջոյանը (զեկուցման թեմա՝ «Վլադիկ Ներսիսյանցի «Ցիվիլիզմի մանիֆեստը» աշխատությունը որպես հասարակության առաջընթացի մոդել»), ամբիոնի դասախոս-թեկնածու, դոցենտ Արսեն Հակոբյանը (զեկուցման թեմա՝ «Յուրացում» ջնջման միջոցով. հիշողությունը եւ տարածքը օկուպացված Ստեփանակերտում»), պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Քանաքարա Հայրապետյանը (զեկուցման թեմա՝ «Որբախնամ գործունեության կազմակերպումը Նոր Բայազետի գավառում (1915-1920-ական թվականներ»): Դասախոս Քանաքարա Հայրապետյանի հետ համահեղինակությամբ զեկուցումներ են ներկայացրել Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «Պատմություն» մասնագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհիներ Լենա Խաչատրյանը (զեկուցման թեմա՝ «Նադիր Շահի բռնագաղթի քաղաքականությունը Արեւելյան Հայաստանում») եւ Արմինե Ասլանյանը (զեկուցման թեմա՝ «1945 թվականին Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության հարցի շուրջ»):

Գիտաժողովին զեկուցմամբ հանդես է եկել ՀՊՏՀ դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Աննա Ասատրյանը (զեկուցման թեմա՝ «ՏԻՄ-երի գործունեության լուսաբանումը Հայաստանի Առաջին Հանրապետության մամուլի էջերում»):

Բաժանմունքի աշխատանքներն ընթացել են ակտիվ հարցուպատասխանի եւ քննարկումների մթնոլորտում:

«Գեղամա աշխարհ»

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՉԵԽԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊԱՆՆԵՐԻՆ

Գավառի պետական համալսարանում կայացել է հանդիպում ՀՀ-ում Չեխիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան, Նորին Գերազանցություն Պետր Պիրունչիկի եւ ՀՀ-ում Ռումինիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան, Նորին Գերազանցություն Կորնել Իոնեսկուի հետ՝ «Եվրոպական Միությունը երիտասարդների համար. եկեք խոսենք այն մասին, ինչը միավորում է մեզ» խորագրով:

Հանդիպումը տեղի է ունեցել Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության կազմակերպած «Եվրոպայի օրերի» միջոցառումների շրջանակում:

Ողջույնի խոսքով հանդես է եկել ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը՝ անդրադառնալով կրթության եւ միջազգային համագործակցության կարեւորությանը՝

երիտասարդների մասնագիտական կայացման եւ մրցունակության ապահովման գործում: Ելույթներով հանդես են եկել դեսպաններ Պետր Պիրունչիկը եւ Կորնել Իոնեսկուն:

Բանախոսները ներկայացրել են ուսանողների եւ դասախոսների համար նախատեսված ԵՄ կրթական, գիտահետազոտական ծրագրերը, ինչպես նաեւ եվրոպական փորձը երիտասարդական քաղաքականության ոլորտում:

Մասնակիցները հյուրերին ուղղել են հարցեր միջազգային ակադեմիական շարժունության ծրագրերի, միջբուհական համագործակցության հնարավորությունների մասին:

ԳՊՀ արտաքին կապերի եւ լրատվության բաժին

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՅՏՆԻ ԵՆ «ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԽՃՈՒՂԱՅԻՆ ՀԵԾԱՆՎԱՎԱԶՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզում անցկացվել է «ՀՀ Վարչապետի գավաթ-2026» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի մարզային փուլը:

Այն անցկացվել է Շողակաթ համայնքից մինչեւ Ծովագյուղ երկաթուղային կայարան՝ 30 կմ երթուղով: Երկու տարիքային խմբերում մասնակցել են 78 մարզիկներ:Առաջին տարիքային խմբում հանդես եկող թիմերի կազմում ընդգրկվել են նույն դպրոցի 7-9-րդ դասարաններում սովորող 1տղա եւ 1 աղջիկ, իսկ երկրորդ տարիքային խմբում՝ 10-12-րդ դասարաններում սովորող 2 տղա 2 աղջիկ:

1-ին տարիքային խմբում 1-ին տեղը գրավել է Սեւանի Մ.Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոցի թիմը: 2-րդ տեղը զբաղեցրել է Գետիկի միջնակարգ դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Լուսակունքի միջնակարգ դպրոցի թիմը:

2-րդ տարիքային խմբում 1-ին տեղը գրավել է Լճաշենի Ա. Տեր -Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի թիմը: 2-րդ տեղը զբաղեցրել է Ծովազարդի միջնակարգ դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Լուսակունքի միջնակարգ դպրոցի թիմը:

Մարզային փուլում բոլոր հաղթող հավաքական թիմերը պարգեւատրվել են հավաստագրերով եւ գավաթներով:

2 տարիքային խմբերում 1-ին տեղ գրաված Սեւանի Մ. Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոցի եւ Լճաշենի Ա.Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի հավաքական թիմերը կմասնակցեն «ՀՀ Վարչապետի գավաթ-2026» խճուղային հեծանվավազքի հանրապետական փուլին:

Գեղամ Չարվադարյան

ՆՈՐԱԲԱԿՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՎ ԹՎԱԳՐՎՈՂ ԵՐԿԱԹՅԱ ՆԻԶԱԿԻ ԾԱՅՐԱԿԱԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Նորաբակ գյուղի տարածքի հնավայրից գյուղատնտեսական աշխատանքերի կատարման ընթացքում հողի տակից գտնվել է նիզակի երկաթյա ծայրակալ, որը գտնող անձը՝ Նորաբակի վարչական ղեկավար Վազգեն Ասադուրյանը, այն փոխանցել է «Գեղամա աշխարհ» մարզային թերթի խմբագրությանը:

Մոտ 30 սանտիմետր երկարության նիզակի ծայրակալի լուսանկարն ուղարկվել է ՀՀ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի մասնագետների ուշադրությանը՝ այն ուսումնասիրելու եւ դրա պատրաստման ժամանակաշրջանը որոշելու նպատակով: ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն Արսեն Բոբոխյանը՝ հենվելով մասնագետների եզրակացության վրա, հավաստեց, որ նիզակի երկաթյա ծայրակալը պատրաստվել է զարգացած միջնադարում՝ 9-12-րդ դարերի ընթացքում, երբ Նորաբակ գյուղը գտնվում էր Սյունյաց նահանգի Սոթք գավառի կազմում:

-Նիզակի ծայրակալը գտնվել է Նորաբակի հյուսիսարեւելյան կողմի հատվածում, վարելահողերի կողքին գտնվող հանդամասից, որից քիչ հեռվում գոտնի վրա նկատելի են նաեւ ինչ-որ կառույցի քարե սյուների երկու խարիսխներ: Նիզակի ծայրակալի գտնվելու վայրում հողի տակից հաճախակի են դուրս գալիս կժերի, կարասների, կուլաների մնացորդներ, ինչը հուշում է, որ մենք գործ ունենք հին ժամանակների բնակատեղիի հետ,- ներկայացրեց Նորաբակի վարչական ղեկավարը:

Նորաբակում գտնված նիզակի ծայրակալն արդեն համալրել է Գեղարքունիքի երկրագիտական թանգարանի հնագիտական արժեքների շարքը:

Խոսրով Խլղաթյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ 7 ԴՊՐՈՑՆԵՐ ԿԱՊԱՀՈՎՎԵՆ ՄԱՐԶԱԳՈՒՅՔՈՎ

ՀՀ կառավարության 2026 թվականի մայիսի 21-ի հերթական նիստում որոշում է կայացվել՝ 32 միլիոն 487 հազար 400 դրամ հատկացնել Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներին՝ մարզագույք ձեռք բերելու նպատակով:

Ծրագրի շրջանակում մարզագույքով կհամալրվեն Ճամբարակի Մ. Քոչարյանի անվան թիվ 2, Վարդենիկի Ռ. Հովհաննիսյանի անվան թիվ 1, Վարդենիսի թիվ 4 հիմնական, Գանձակի թիվ 1, Գանձակի թիվ 2, Գավառի Մ. Բունիաթյանի անվան թիվ 8, Լճափի եւ Սեւանի թիվ 6 միջնակարգ դպրոցները:

Այս դպրոցների մարզադահլիճները վերանորոգվել են 2025-2026 թվականների ընթացքում, շինարարական աշխատանքներն ավարտված են ամբողջությամբ, իսկ մարզագույքի համալրումով արդեն նոր ուսումնական տարվանից նշյալ դպրոցների աշակերտները ֆիզկուլտուրայի դասերը կանցկացնեն արդի չափորոշիչներին համապատասխանող մարզադահլիճներում:

Գույքի ներկրման գործընթացը կսկսվի համաձայնագրի կնքումից հետո, առաջիկա 1 ամսվա ընթացքում:

«Գեղամա աշխարհ»

11.qxd 31/05/2026 21:03 Page 7

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀՐԱՆՏ ՄԱՌԵՎՈՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

/սկիզբը՝ նախորդ համարներում/

Աշխենի ողջամտությունը բավականացնում է իրավիճակը ճիշտ գնահատելու, անհատի հոգու անդրադարձումը տեսնելու համար, նրա մեծահոգությունը թույլ չի տալիս կույր լինել իրականության նկատմամբ, սակայն արժանապատվությունը՝ բարոյական մարդու առհավատչյան, ամեն ինչից եւ ամենքից վեր է դասում:

Ժամանակի արհավիրքները խորտակում են Շուշանի բարոյական կերպարը: Նա չի ցանկանում առաջնորդվել անցյալի վարքուբարքով, իսկ նրա ծաղկուն հասակը թույլ չի տալիս ընդունել միջավայրի ծանր պահանջները: Շուշանը նախընտրում է լինել իր կաղապարի մեջ, իսկ ժամանակն ու հանգամանքները պաշտպանում են հերոսուհու շահերը:

«Կենդանին եւ մեռյալը» առավել ընդարձակ աշխարհ է, որի շրջանակներում մի տեսակ կենդանի, մի տեսակ վայրի, բնությանը համահունչ ազատությամբ առաջ է ընթանում Արեւելքը, եւ լճացման, ինքնասպառման, սեփական ձեռքերով փորած մեռյալ փոսում զվարճանում է Արեւմուտքը: Կապիտալը հայտնվել է առջեւում, մարդը մնացել է ետեւում: Այստեղ իրերն ու անձերը սկսել են գնահատվել ոչ թե բովանդակային, այլ՝ ձեւական տեսանկյունից: Նյութական կարողություններ ունեցողներին մարդկային արժեքները չէ, որ պակասում են, այլ փառքը, ճանաչումը: Երբեմնի քաղաքակրթության բնօրրանում ընտանիքը կարող է կառուցվել կապիտալի հենքի վրա, առանց ավելորդ սենտիմենտալության: Այդ մեծ աշխարհում առեւտրական հարաբերությունների շրջապտույտի մեջ են հայտնվել մարդկային բոլոր արժեքները, եղծվել է մարդու կերպարը, նրա հոգեւոր, բարոյական աշխարհը:

ԱՋՆՎԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՋ

Անցյալի ժառանգությանը տեր լինելու եւ ապագային ավանդելու մղումը («Տերը»)

Ապագայի մասին պատկերացումները հաճախ կարող են իրենց մեջ անընմբռնելի սահմաններ ամփոփել, սակայն, եթե հաշվի առնենք, որ ներկայում մեր կողմից պարպվող ամեն ակնթարթը դառնում է անցյալ, իրատեսական կդառնա այն, որ անցյալը, ներկան եւ ապագան մեկ ընդհանուր համակարգի միմյանց համակցված բաղադրիչներ են: Պարզապես, երբեմն ապագան թվում է հեռավոր եւ ուշ հասանելի՝ պարփակելով իր մեջ նոր ու անծանոթ, սակայն հավանական հնարավորությունների ամբողջություն:

Մեծ նշանակություն ունի, թե մարդը ինչ է տանում դեպի ապագա ներկայից եւ անցյալից եւ մարդկային գործոնն այս հարցում նշանակալի է. նա է իր անցյալի եւ ներկայի տնօրինողը, ուստի կարող է լինել նաեւ իր ապագայի ճարտարապետը: Ապագան նախագծվում է անցյալում եւ հաստատվում, ամրագրվում է ներկայում:

Ապագայի նկատմամբ հետաքրքրությունը ոչ թե համեստ դրսեւորումներ, այլ մեծ նախաձեռնողություն, կառուցողական մտածողություն պետք է ունենա իր մեջ՝ գտնելու համար ցանկալի հանգրվանը: Մարդու ընթացքը դեպի ապագա կարող է «ընդհատվել» անցյալ-ներկա-ապագա հաղորդակցության անտեսման, անցյալի ու ներկայի անսահմանափակ թվացող հոգեւոր եւ նյութական միջոցները պատշաճ կերպով չարժեւորելու հետեւանքով:

Ժամանակի երեք կարեւորագույն հանգրվանները արժեւորելու, հայ մարդու մեջ իր ունեցածի տերը լինելու առաքելության որոնումների, կորսվող ազնվականության, խաթարվող ավանդականության եւ բազմաթիվ այլ հիմնահարցերի շուրջ է ձեւավորված Հ. Մաթեւոսյանի «Տերը» վիպակը:

«Տերը» վիպակին նույնպես խորթ չէ գյուղական պատկեր լինելու մաթեւոսյանական գիծը, սակայն ներսում ապրում է հեղինակի՝ Հայոց աշխարհի համար մի իսկական Տեր որոնել-գտնելու վաղեմի երազանքը: Մ. Զաքարյանը գրում է. «Ազգային գրականության մեջ Հր. Մաթեւոսյանը նոր տեքստ է զարգացնում, որի էությունը, կառուցվածքն ու բնույթը ներծծված են ժամանակի սթափ զգացողությամբ, յուրաքանչյուր սերնդի կողմից սեփական ժամանակն ու տարածությունն ապրելով արարելու տրամադրությամբ, համաձայն որի՝ դու ապրում ես ոչ միայն քո, այլեւ քո երկրի, պետության, ազգի բարօրության համար եւ կատարելով քո պարտականութ-յունները՝ դառնում ես Տեր»: Հնարավոր է, որ այդ երազանքների շնորհիվ էլ հերոսի մեջ նահապետի՝ ընտանիքի մեծ հոր հատկանիշներ են ձեւավորել, ինչի արդյունքում էլ Ռոստոմն իր հարազատներին դիմում է «մեր տիկինը, մեր քվեր, մեզնից սերվածը, մեր հայրը» եւ համանման այլ եղանակներով, մի բան, որն ընդունված է եղել հայոց մեջ հեռավոր անցյալում:

Հայ ընտանիքում մի կողմից նահապետը չի արտաբերել մերձավորների անունները, մյուս կողմից ընտանիքի անդամներին արգելված է եղել նրա հետ ուղիղ կերպով հաղորդակցվելը եւ անունը հնչեցնելը:

/շարունակելի/

Ռուզան Վարդանյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է 19-20-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԶՆԵՐԻ ՅՈՒՅԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի երկրագիտական թանգարանը «Թանգարանային գիշեր» ու «Թանգարանների միջազգային օր» միջոցառումների ընթացքում ունեցել է 345 այցելու:

Ինչպես տեղեկացրեց Գեղարքունիքի երկրագիտական թանգարանի տնօրեն Մարիաննա Մուսոյանը, մայիսի 16-ին թանգարանում կայացել է «Թանգարանների գիշեր» միջոցառումը, որի ընթացքում այցելուներին ցուցադրվել է «Սարդարապատի հուշահամալիր Հայոց ազգագրության թանգարանի» 19-20-րդ դարերի ազգային տարազները:

Ցուցահանդեսի բացմանը թանգարանի գիտաշխատող Մանյա Զարվադարյանն անդրադարձել է հայկական տարազների պատմությանը: Միջոցառումն ուղեկցվել է Գանձակի երաժշտական դպրոցի պարարվեստի խմբի սաների ազգային պարերի կատարմամբ: Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի աշակերտները՝ ուսոցչուհի Խանում Խաչատրյանի գլխավորությամբ եւս մասնակցել են միջոցառմանը:

-Մենք երկու միջոցառումների ընթացքում ունեցանք 345 այցելու, ովքեր մեծ հետաքրքրությամբ դիտեցին հայ ազգային տարազները, ինչպես նաեւ մեր թանգարանային հարուստ հավաքածուները, ծանոթացան մեր մարզի պատմությանն ու պատմամշակութային արժեքներին: Ոմանք իրենց տպավորությունները գրավոր թողեցին մեր թանգարանի նշումների մատյանում: Մեր այցելուները հիմնականում դպրոցների ուսուցիչներն ու աշակերտներն էին, այլ կազմակերպությունների աշխատակիցներ, անհատ քաղաքացիներ,- ներկայացրեց Մարիաննա Մուսոյանը:

ԱՍՖԱԼՏԱՊԱՏՎՈՒՄ Է ԶՈԼԱՔԱՐ ԳՅՈՒՂԻ 10-ՐԴ ՓՈՂՈՑԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սկսվել եւ ընթանում են 10-րդ փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Զոլաքարի 10-րդ փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 111 միլիոն 700 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Զոլաքար գյուղի 10-րդ փողոցի ասֆալտապատում՝ 1100 գծամետր երկարությամբ, 5500 քառակուսի մետր մակերեսով: Հիմնանորոգվող ճանապարհի երկայնքով տեղադրվում է ոռոգման եւ ջրահեռացման համակարգ՝ երկաթբետոնյա կիսախողովակներով: Նույն ծրագրի շրջանակներում 900 մետր երկարությամբ էլ ոռոգման ջրատարի երկաթյա հին, քայքայված խողովակաշարը փոխարինվում է պոլիէթիլենային խողովակաշարով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի ապրիլի կեսերից եւ մայիսի 18-ի դրությամբ իրականացվել շուրջ 40 տոկոսով:

Զոլաքարի 10-րդ փողոցն ասֆալտապատվում է առաջին անգամ:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ-ն:

Զոլաքարում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվեցիոն ծրագրերի շրջանակներում արդեն ավարտական փուլում են գտնվում ոռոգման ջրատարի կառուցման աշխատանքները:

Զոլաքարի 4-րդ փողոցի ոռոգման ջրատարի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 33 միլիոն 898 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Զոլաքարի 4-րդ փողոցի ոռոգման ջրատարի կառուցում երկաթբետոնյա կիսախողովակներով, 700 գծամետր երկարությամբ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի սեպտեմբերից, ընդհատվել ձմեռային եղանակի պատճառով ու վերսկսվել 2026 թվականի ապրիլից:

2026 թվականի մայիսի 19-ի դրությամբ ծրագիրը գտնվում է ավարտական փուլում:

Ծրագրի իրականացման արդյունքում 2026 թվականի ոռոգման շրջանի մեկնարկից արդեն 4-րդ թաղամասի մոտ 100 տնտեսությունների ոռոգման ջուրը կմատակարարվի անկորուստ ու ժամանակին:

«Գեղամա աշխարհ»

ՎԱՂԱՇԵՆՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 23 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վաղաշեն գյուղում 2018-2025 թվականներին սուբվենցիոն ու պետական ծրագրերի շրջանակներում սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության 23 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 2 միլիարդ 213 միլիոն 317 հազար 619 դրամ: Ներդրված ծրագրերից 16-ը սուբվենցիոն են՝ 950 միլիոն 925 հազար դրամ արժեքով, 7-ը՝ պետական՝ 1 միլիարդ 262 միլիոն 392 հազար 600 դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականներին Վաղաշենում կառուցվել է 25000 հազար մետր խմելու ջրատարի ներքին ու արտաքին ցանցեր, 16400 մետր ոռոգման ջրատար ցանցեր, 1 դրենաժային համակարգ՝ 1,4 կմ երկարությամբ, 15 000 մետր լուսավորության ցանց, 700 մետր գազատար, 12000 մետր արոտավայրի ջրարբիացման համակարգեր, արեւային ֆոտովոլտային կայան, հիմնանորոգվել 8000 մետր ներհամայնքային ճանապարհ, Վաղաշենի մանկապարտեզի եւ դպրոցի շենքերը:

Պետական ծրագրի շրջանակներում, 150 միլիոն դրամ պայմանագրային արժեքով, ընթացքի մեջ է Վաղաշենի ԱԱՊԿ նոր շենքի կառուցումը, որի շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հոկտեմբերից եւ կավարտվեն 2026 թվականի ընթացքում: Պետական մեկ այլ ծրագրով 2025 թվականի ընթացքում, 200 միլիոն դրամ պայմանագրային արժեքով, վերանորոգվել է Վաղաշենի միջնակարգ դպրոցի շենքը:

Վաղաշենի մանկապարտեզի շենքը հիմնանորոգվել եւ արդիականացվել է 2019-2021 թվականների ընթացքում, սուբվենցիոն ծրագրով, 112 միլիոն 374 հազար դրամ արժեքով, ու վերաբացվել 2023 թվականին: Մանկապարտեզն այժմ գործում է 3 խմբով, 90 սանով:

«Գեղամա աշխարհ»

11.qxd 31/05/2026 21:03 Page 8

ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 18 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վերին Գետաշեն գյուղում 2018-2025 թվականներին սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության 18 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված ներդրումները կազմել են 1 միլիարդ 252 միլիոն 14 հազար դրամ: Սուբվենցիոն 17 ծրագրերի իրականացման արդյունքում, 1 միլիարդ 52 միլիոն 796 հազար դրամի ներդրմամբ, կառուցվել է 13 հազար 912 մետր երկարության ոռոգման ջրատար առուներ, հիմնանորոգվել 11 625 մետր ներհամայնքային ճանապարհ՝ 46 500 քառակուսի մետր մակերեսով: Արտաքին լուսավորության ցանց է կառուցվել գյուղի երկու գերեզմանոցներում:

ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում, 180 միլիոն դրամի ներդրմամբ, հիմնանորոգվել եւ արդի չափորոշիչներին է համապատասխանեցվել Վերին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոցի մարզադահլիճը եւ նրան կից մասնաշենքը:

Գեղարքունիք-Ֆրանսիայի Իզերի մարզ ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում, ֆրանսիական կողմի միջոցներով, հիմնանորոգվել եւ արդիականացվել է Վերին Գետաշենի բուժամբուլատորիայի շենքը, շուրջ 21 միլիոն դրամի ներդրմամբ:

«Գեղամա աշխարհ»

ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Ծովագյուղ գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրի շրջանակներում 2026 թվականի ապրիլ ամսից մեկնարկել եւ ընթանում են մշակույթի տան վերանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Ծովագյուղի մշակույթի տան վերանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 126 միլիոն 632 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Ծովագյուղի մշակույթի տան ներքին հարդարում, նոր դռների տեղադրում, սանհանգույցների, ջրամատակարարման, էներգամատակարարման համակարգերի կառուցում, այլ աշխատանքներ:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի սեպտեմբերին:

2026 թվականի մայիսի 19-ի դրությամբ իրականացվել է շինարարական աշխատանքների մոտ 10 տոկոսը:

«Գեղամա աշխարհ»

ՃԱՄԲԱՐԱԿԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԵՆ ՇՈՒՐՋ 55 ՏՈԿՈՍՈՎ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցի նորակառույց շենքի շինարարական աշխատանքների մեկնարկը տրվել է 2025 թվականի փետրվար ամսից, ՀՀ Կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում, ՀՀ Տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ ու պետական միջոցներով, 1 միլիարդ 276 միլիոն դրամ պայմանագրային արժեքով:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, դպրոցական նոր շենքը կառուցվում է՝ հին շենքի տեղում՝ 450 աշակերտական տեղով: Կառուցմանը նախորդել են դպրոցական հին շենքի քանդման ու շինաղբի հեռացման աշխատանքները: Նորակառույց դպրոցը կունենա յոթ մասնաշենք եւ արդի չափորոշիչներին համապատասխան պայմաններ: Ձեռք կբերվի նոր գույք:

2026 թվականի մայիսի 19-ի դրությամբ շինարարական աշխատանքներն իրականացվել են շուրջ 55 տոկոսով:

Շինարարությունը նախատեսվում է ավարտել 2026 թվականի նոյեմբերի 30-ին:

«Գեղամա աշխարհ»

ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վերին Գետաշեն գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2026 թվականի ապրիլից սկսվել եւ ընթանում են արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքները:

Վերին Գետաշենի արտաքին լուսավորության ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 47 միլիոն դրամ, որի 60 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 40 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է արտաքին լուսավորության ցանցի կառուցում Վերին Գետաշենի կենտրոնական ու երկրորդական փողոցներում, 9800 գծամետր երկարությամբ, ԼԵԴ համակարգով աշխատող 280 լուսատուների տեղադրմամբ:

2026 թվականի մայիսի 20-ի դրությամբ շինարարությունն իրականացվել է շուրջ 80 տոկոսով:

Ծրագրի իրականացման արդյունքում Վերին Գետաշենի յոթ փողոցների տնտեսությունները արտաքին լուսավորության ցանցից օգտվելու հնարավորություն կունենան:

ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՀԱՅՐԱՎԱՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ

ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում ու Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ 2026 թվականի մարտի 20-ից մեկնարկել եւ ընթանում են Գաղարքունիքի մարզի Գավառ համայնքի Հայրավանք գյուղի միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 296 միլիոն 600 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Ծրագրով նախատեսված է հատակի, տանիքի, միջանցքների ու դասասենյակների, սանհանգույցների, ջրամատակարարման ու էներգամատակարարման համակարգերի վերանորոգում, նոր դռների ու լուսամուտների տեղադրում, բակային տարածքի ասֆալտապատում եւ բարեկարգում, ֆուտբոլի դաշտի վերանորոգում, այլ աշխատանքներ:

2026 թվականի մայիսի 18-ի դրությամբ շինարարական աշխատանքներն իրականացվել են շուրջ 85 տոկոսով:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026 թվականի սեպտեմբերին:

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՄԻՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 1 մարզադպրոցում կայացել է դպրոցական աղջիկների մինի ֆուտբոլի բաց առաջնություն, որը կազմակերպել է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի Գեղարքունիքի մարզի ներկայացուցիչ Վարդան Դավթյանը:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, մրցաշարին ներկա են եղել «Հայաստանի Աղջիկների Առաջնորդությունը Սպորտում» կրթական հիմնադրամի ներկայացուցիչները:

Առաջնությանը մասնակցել են Գեղամասարի, Սոթքի, Փոքր Մասրիկի եւ Ծակքարի միջնակարգ դպրոցների հավաքական թիմերը:

Մրցաշարի վերջնական արդյունքներով առաջին տեղը գրավել է Գեղամասարի միջնակարգ դպրոցի թիմը: Երկրորդ տեղը գրավել է Սոթքի միջնակարգ դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Ծակքարի միջնակարգ դպրոցի թիմը:

Լավագույն ֆուտբոլիստուհիներ են ճանաչվել Սոթքի միջնակարգ դպրոցի աշակերտ Միլենա Ավետյանը, Ծակքարի միջնակարգ դպրոցի աշակերտ Մերի Ղուկասյանը եւ Գեղամասարի միջնակարգ դպրոցի աշակերտ Միլենա Հարությունյանը:

Վարդենիսի համայնքապետարան

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 29. 05. 2026 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: